ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՏԿՏՏՆ-ԳՀԱՇՁԲ-2019/3Շ

ք. Երևան **«04 » հուլիսի 2019թ.**

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը, ի դեմս նախարարության գլխավոր քարտուղար Մ.Բաղդասարյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և <<Մոնտաժտրանսսշին>> ՍՊԸ-ն, ի դեմս գլխավոր տնօրեն Գ.Սեդրակյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված Մ-3 Մարգարա-Վանաձոր-Տաշիր-Վրաստանի սահմանի կմ83+850 հատվածի կամրջի և Մ-4, Երևան - Սևան - Իջևան - Ադրբեջանի սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ103+100 հատվածի վթարված կամրջի վերականգնման աշխատանքներ (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ պայմանագիրը ուժի մեջ մտնելուց 150 օր հետո:

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքների առնվազն 75 տոկոսը կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործված նյութերի երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները ներկայացված են պայմանագրի N – Հավելվածում:

3.4.10 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 (տասը) աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 37 900 284 (երեսունյոթ միլիոն ինը հարյուր հազար երկու հարյուր ութսունչորս) ՀՀ դրամ, որից 6 316 714 (վեց միլիոն երեք հարյուր տասնվեց հազար յոթ հարյուր տասնչորս) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը, ընդ որում՝

1-ին չափաբաժին 17 700 384 (տասնյոթ միլիոն յոթ հարյուր հազար երեք հարյուր ութսունչորս) ՀՀ դրամ՝ որից 2 950 064 (երկու միլիոն ինը հարյուր հիսուն հազար վաթսունչորս) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն:

2-րդ չափաբաժին 20 199 900 (քսան միլիոն հարյուր իննսունինը հազար ինը հարյուր) ՀՀ դրամ՝ որից 3 302 325 (երեք միլիոն երեք հարյուր երկու հազար երեք հարյուր քսանհինգ) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն[1]:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը :

5.4 Պայմանագրի շրջանակում կատարողական ակտերի դիմաց վճարումներն իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳՏ=ՄԳ/ՆԳxԾԳՏxԾ, որտեղ՝

ՄԳ-ն Պայմանագրի 5.1 կետում նշված գինն է[2].

ՆԳ-ն շինարարական ծրագրի նախահաշվային գինն է.

ԾԳՏ-ն նախահաշվով ըստ աշխատանքի առանձին տեսակների համար սահմանված միավոր գինն է.

Ծ-ն կատարողական ակտերով ներկայացված աշխատանքի ծավալն է.

ՎԳՏ - նախահաշվով սահմանված առանձին տեսակների աշխատանքների դիմաց վճարվող գումարն է:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայամանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

---

[1] *Եթե Կապալառուի կողմից գնային առաջարկը ներկայացվել է առանց ԱԱՀ-ի, ապա պայմանագիրը կնքելիս սույն կետից հանվում են «որից ------- (---------) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն» բառերը:*

[2] *Եթե պայմանագրում ներառված են 1-ից ավելի չափաբաժիններով ներկայացված գնման առարկաներ,ապա ՄԳ-ն պայմանագրի 5.1 կետում նշված՝ համապատասխան չափաբաժնի գինն է:*

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Սույն պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն ՀՀ ք.Երևան, Կառավարական տուն 3 ՀՀ կենտրոնական գանձապետարան ՀՎՀՀ 02578338 ՀՀ 900011025815 ---------- /ստորագրություն/ Կ.Տ	<< Մոնտաժտրանսսշին >> ՍՊԸ ք. Երևան, Ուլնեցու 59/5, տարածք 9 <<Արդշինբանկ >> «Շենգավիթ» մ/ճ ՀՎՀՀ 02266448 Հ/Հ 24736043861500 ---------- (ստորագրություն) Կ.Տ.

Հավելված թիվ 1
« 04» հուլիսի 2019թ. կնքված
ՏԿՏՏՆ-ԳՀԱՇՁԲ-2019/3Շ ծածկագրով պայմանագրի

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ
ՉԱՓԱԲԱԺԻՆ 1
Մ-3, Մարգարա-Վանաձոր-Տաշիր-Վրաստանի սահմանի կմ83+850 հատվածի կամրջի վերանորոգման աշխատանքների

ՀՀ հազ. դրամ

NN	Աշխատանքների անվանումը	Չափ. միավ.	Ծավալ	Միավորի արժեքը	Ընդհանուր արժեքը
1	2	3	4	5	6
1	Պահպանված թուջե բազրիքների ապամոնտաժում ձեռքով և վերադարձ սեփականատիրոջը:	տ	1.2	36.509	43.811
2	Т-1-1.0 հավաքովի մայթի բլոկների ապամոնտաժում, բարձում ա/ի և տեղափոխում լցակույտ 6 կմ հեռավորության վրա:	մ³	5.44	24.235	131.838
3	Երթևեկային մասի ծածկի և քարային շարվածքի կազմատում ձեռքով որպես 10eIV գրունտ, բարձումը ձեռքով ա/ի և տեղափոխում լցակույտ 6 կմ հեռ. վրա - h=30 սմ:	մ³	54.54	9.329	508.804
4	Կցորդումներում ճանապարհային հագուստի կազմատում 0.65 մ3 շտ էքս. և տեղափոխում լցակույտ 6 կմ հեռ. վրա - h=32 սմ:	մ³	67.2	2.985	200.592
5	Կամրջատակ հունի մաքրման հողային աշխատանքներ ձեռքով, գրունտի տեղափոխում մինչև 25 մ հեռ. վրա պատգարակներով բարձում ա/ի և տեղափոխում լցակույտ 6 կմ հեռ. վրա - 10eIV:	մ³	40.6	16.148	655.609
6	Գետի հունի մաքրում բերվածքներից 0.65 մ³ շտ էքս. և տեղափոխում լցակույտ 6 կմ հեռ. վրա:	մ³	31.3	2.985	93.431
7	Հենարանների երկայնքով խրամուղու հողային աշխատանքներ ձեռքով կողքի գցումով - 10eIV:	մ³	7.3	6.530	47.669
8	Հենարանների ուժեղացման «շապիկների» տակ ավազակոպճային շերտի տեղադրում - h=10սմ:	մ³	1.83	6.873	12.578
9	Հենարանների ուժեղացման «շապիկի» միաձույլ ամրանավորված բետոն B20: Ամրան - Ø10 A500c - 956.07 կգ: Հենարանների վրա խարսխային ձողեր տեղադրելու համար անցքերի գայլիկոնում- d40մմ, L_1=25 սմ (208հատ/52մ) Հենարանների վրա ամրանային խարիսխների տեղադրում Ø16 A500c (0.1314տ), L_1=40 սմ (էպոքսիդացեմենտային շաղախ - 0.055 մ³)	մ³	29.50	224.023	6608.679
10	Հենարանների վերևի հատվածների վերանորոգում M200 մակնիշի ցեմ. շաղախով - δ=5 սմ:	մ²	18.20	3.949	71.872

11	Մուտքում և ելքում սալերի վերանորոգում M200 ցեմ. շաղախով, b=5 սմ:	մ²	72.0	4.073	293.256
12	Կցորդման տեղամասերում միաձույլ սալի տակ խճային բարձիկի իրականացում:	մ³	5.90	8.757	51.666
13	Թռ. կառուցվածքի ուժեղացման միաձույլ ե/բետոնե սալի և անվահրիչների իրականացում - B25, F200: ∅6.5A240 - 0.0866 տ ∅12A500c - 3.3323 տ: ՆՄ -12x150x220 մմ - 32 հատ. S=1.06 մ²; ∅14A500c - L₁=682 մմ, 64 հատ, P=52.8 կգ:	մ³	33.69	128.982	4345.404
14	Միաձույլ ե/բետոնե անվահրիչների իրականացում - B25, F200: ∅6.5A240 - 0.00704 տ ∅10A500c - 0.132 տ: ∅12A500c - 0.2481 տ:	մ³	4.69	137.658	645.616
15	Ջրամեկուսացման իրականացում երկշերտ իզոգամով:	մ²	174.0	2.713	472.062
16	Ամրանավորված պաշտպանիչ բետոնի իրականացում միաձույլ բետոնով (W6, B25) - H=4սմ; ամրանային ցանց - ∅4 (100x100) - 156 մ²:	մ³	6.24	150.458	938.858
17	Ծածկի ներքին շերտի մանրահատիկ ա/բետոնի տեղադրում. ներքին շերտ H=4սմ;	մ²	156	4.613	719.628
18	Ծածկի վերին շերտի մանրահատիկ ա/բետոնի տեղադրում. ներքին շերտ H=3սմ;	մ²	156	3.550	553.800
19	Մայթերի ավազային ասֆալտ հմիջ.=3.5 սմ:	մ²	18.0	4.401	79.218
20	Բազրիքների տեղադրում՝ ներկումով: Քառակուսի խողովակ □60x5 - L=61.71 մ, □40x4 - L=93.62 մ, □45x4 - L=3.52 մ,	տ	0.974	774.010	753.886
21	Անվահրիչների ուղղահայաց գծանշում:	մ²	22.8	0.800	18.240
22	Անվտանգության գոտիների հորիզոնական գծանշում - հոծ:	գմ	30.0	0.108	3.240
23	Մոտեցումներում ծածկի մնացորդների և հողային պաստառի կազմատում որպես 10eIV գրունտ: Գրունտի կազմատումը էքս. 0.65մ³ շ. տ. բարձում ա/ինքնաթափ և տեղափոխում լցակույտ 6 կմ հեռ. վրա:	մ³	67.2	3.070	206.304
24	Հողային պաստառի համահարթեցում գրեյդերով:	մ²	210.0	0.024	5.040
25	Ավազակոպճային շերտ h=10սմ	մ²	210.0	0.518	108.780
26	Խիճ h=12սմ բիտումի տարածումով 4,12տ/1000մ²	մ²	210.0	3.606	757.260
27	Խոշորահատիկ ա/բ ծածկ h=6սմ	մ²	210.0	6.207	1303.470
28	Մանրահատիկ ա/բ ծածկ h=5սմ	մ²	210.0	5.676	1191.960
				Ընդամենը	**20822.569**
				Ընդհանուրը	**20822.569**

*Գինը ներառում է բոլոր ծախսերը, ներառյալ «Շահույթը»՝ 11% և ԱԱՀ-ն՝ 20%

ՀԱՎԵԼՎԱԾ 2

Մ-4, Երևան - Սևան - Իջևան - Ադրբեջանի սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ103+100 հատվածի վթարված կամրջի վերականգնման աշխատանքների

ՀՀ հազ. դրամ

NN	Աշխատանքների անվանումը	Չափ. միավ.	Ծավալ	Միավորի արժեքը	Ընդհանուր արժեքը
1	2	3	4	5	6
	1. Նախապատրաստական աշխատանքներ				
1	Գոյ. ունեցող մայթի բազալտե եզրաքարերի ապամոնտաժում կողքի պահեստավորումով հետագա օգտագործման համար:	մ	7	1.427	9.989
2	Ձախ բազրիքների կազմատում կողքի պահեստավորում հետագա օգտագործման համար:	տ	0.145	35.142	5.096
3	Աջ բազրիքների կազմատում և վերադարձ սեփականատիրոջը:	տ	0.0945	35.142	3.321
4	Ա/բետոնե ծածկի ($H_{մ.}$=15սմ) կազմատում պնևմագործիքով, բարձում ձեռքով ա/ինքնաթափ և տեղափոխում լցակույտ 19 կմ հեռ. վրա:	$մ^3$	10.26	11.800	121.068
5	Հավաքովի ե/բ Π-3 սալերի ապամոնտաժում և տեղափոխում լցակույտ 19 կմ հեռ. վրա:	$մ^3$	12.48	26.900	335.712
6	Թռ. Կառուցվածքի միաձույլ ե/բ սալի ապամոնտաժում և տեղափոխում լցակույտ 19 կմ հեռ. Վրա: Չափ. 3.5x3.6x0.25 մ	$մ^3$	3.15	46.960	147.924
7	Շինարարության ընթացքում ջրի հոսքն ապահովելու համար d820 մմ (δ=7) խողովակի տեղադրում հետագա ապամոնտաժումով և վերադարձ սեփականատիրոջը 100%:	գմ	27	65.643	1772.361
				1. Ընդամենը	***2395.471***
	2. Վերականգնման աշխատանքներ				
1	Հենարանների և ելքի կարգավորիչ թևերի վրա խարսխային ձողեր տեղադրելու համար անցքերի գայլիկոնում- d40մմ, L_1=25 սմ:	հատ	284	2.052	582.768
2	Հենարանների և ելքի կարգավորիչ թևերի վրա ամրանային խարիսխների տեղադրում ∅16 A500c , L_1=40 սմ: էպոքսիդացեմենտային շաղախ - 0.075 $մ^3$:	տ	0.18	681.770	122.719
3	Հենարանների երկարությամբ, 10eIV գրունտում խրամուղու փորման հողային աշխատանքներ ձեռքով, կողքի գցումով:	$մ^3$	6.06	7.549	45.747
4	Հենարանների ուժեղացման «շապիկի» միաձույլ ամրանավորված բետոն B20: Ամրան - ∅10 A500c - 844.28 կգ:	$մ^3$	31.12	222.800	6933.536
5	Ելքի կարգավորիչ պատերի ուժեղացման «շապիկի» միաձույլ ամրանավորված բետոն B20: Ամրան - ∅10 A500c - 171.66 կգ:	$մ^3$	7.08	221.260	1566.521
6	Ռիգելների միաձույլ ե/բետոն - B25 դասի: Ամրան - ∅12 A500c - 105.5 կգ, ∅8 A240 - 69.52 կգ:	$մ^3$	3.60	138.830	499.788

7	Մուտքում կարգավորիչ հենապատի հիմքի վերանորոգում B20 դասի միաձույլ բետոնով:	մ^3	4.8	77.700	372.960
8	Կուտակված գրունտով հետլիցք - 10eIV:	մ^3	2.02	2.150	4.343
9	Հենարանների հենման տեղամասերի հարթեցում մանրահատիկ B25 դասի բետոնով - $h_{միջ}$=5 սմ:	մ^3	0.60	87.830	52.698
10	Հենման տեղամասերում որպես հենարանային մաս երկշերտ ռուբերոիդի տեղադրում:	մ^2	12.0	7.700	92.400
11	Թռ. Կառուցվածքի հավաքովի ե/բ Π-3 սալերի տեղադրում (20 հատ): Չափ. 22x98x360 սմ:	մ^3	15.0	402.115	6031.725
12	Ե/բ սալերի միավորման B25 դասի, միաձույլ բետոն, բետոն խիճ ≤20մմ:	մ^3	0.93	75.680	70.382
13	Հարթեցնող շերտի ցեմենտային շաղախ անվահրիչների տակ - h=2սմ:	մ^2	4.4	1.302	5.729
14	Հարթեցնող շերտի (հոսքային եռանկյունի) մանրահատիկ B20 բետոն խիճ ≤20 մմ - $h_{միջ.}$=8սմ:	մ^3	4.61	74.020	341.232
15	Ջրամեկուսացման իրականացում երկշերտ իզոգամով:	մ^2	71.86	2.825	203.005
16	Ամրանավորված պաշտպանիչ բետոնի իրականացում միաձույլ բետոնով (W6, B25) - H=4սմ; ամրանային ցանց - Ø4 (100x100) - 57.6 մ2, P= 0.113 տ:	մ^3	2.304	158.500	365.184
17	Անվահրիչների տեղադրման համար ցեմ շաղախի տեղադրում - h=1սմ:	մ^2	3.3	0.768	2.534
18	Մայթերի անվահրիչների ԵՐ-1 բլոկների (2հատ) հավաքովի ե/բետոն (B30, F200). չափ. 60x75x275սմ, քաշը՝ - 1.14 տ, ա.պ. AI=30.66 կգ/մ3, AIII=178.68 կգ/մ^3: Ներդիր դետալներ. - 10x100x200մմ, F=0,64մ2, P=0,0502տ; Ø12 AIII P=0,0256տ: Պողպատե խողովակներ d=76մմ, L=3.2մ, P=0,0176տ:	մ^3	0.912	605.050	551.806
19	Անվահրիչների հետևը միաձույլ բետոնից (B20, F100) հենակի իրականացում:	մ^3	0.09	80.120	7.211
20	Բազրիքների տեղադրում անվահրիչների վրա - h=50 սմ՝ ներկումով: Ուղղանկյուն խողովակ - 50x30x2.5, L=22.77 մ:	տ	0.06512	842.540	54.866
21	Պահեստավորված բազալտե եզրաքարերի տեղադրում 15x30 (0.09մ^3 բետ.)	գմ	7	5.337	37.359
22	Ձախ կողմում բետոնե գլխամասի իրականացում B20 դասի միաձույլ բետոնով: ՆՄ տեղադրում բազրիքների ամրացման համար. --10x100x200 - 4 հատ, S=0.08 մ^2, P=6.28 կգ: Ø12 AIII L=3.6, P=3.17 կգ:	մ^3	0.855	89.644	76.646
23	Պահեստավորված բազրիքների տեղադրում (6.9 գծմ)	տ	0.145	58.217	8.441
24	Մայթի տեղամասում B15 դասի թեթև բետոնի իրականացում	մ^3	4.345	66.220	287.726
25	Մայթի ավազային ա/բ h=4 սմ:	մ^2	11.0	5.134	56.474
26	Ներքին շերտի մանրահատիկ ա/բետոնի ծածկի տեղադրում h=4սմ:	մ^2	96	4.840	464.640
27	Վերին շերտի մանրահատիկ ա/բետոնի ծածկի տեղադրում h=3սմ:	մ^2	99	3.720	368.280
28	Անվահրիչների ուղղահայաց գծանշում:	մ^2	4.1	0.800	3.300
				2.Ընդամենը	***19210.019***

	3. Ջրընդունիչ				
1	Գոյ. ունեցող թուջե ջրնդունիչների (13հատ) ապամոնտաժում ձեռքով և վերադարձ սեփականատիրոջը:	տ	1.7	108.320	183.061
2	Փոսորակի փորում 10eIV կարգի բնահողում ձեռքով, կողքի կուտակումով:	մ^3	2.6	6.290	16.354
3	Ավազակոպճային շերտ h=10սմ	մ^3	1.2	6.040	7.369
4	Միաձույլ ե/բ ջրընդունիչ վաք (բետոն B-20) ամրան ∅ 14մմ A500c - 130.03 կգ:	մ^3	4.52	153.000	691.560
5	Ցանցի իրականացում ամրան ∅ 25մմ A500c - L=74.88 մ, P=288.51 կգ Անկյունակ L 100x10մմ - L=26 մ, P= 392.6 կգ Անկյունակ L 90x9մմ - L=39.52 մ, P=482.14 կգ	կգ	1163.26	1.034	1202.811
6	Դեպի կամրջի հուն ջրահեռացման համար ∅273 պողպատե խողովակի տեղադրում՝ ջրամեկուսացումով:	գմ	4.50	29.867	134.402
7	Քսվածքային ջրամեկուսացում	մ^2	15.6	1.505	23.478
8	Հետլիցք ձեռքով	մ^3	2.08	2.153	4.478
9	Ավելացած գրունտի բարձում ա/ի էքս. 0.65 մ^3 շ.տ. տեղափոխում լցակույտ 19 կմ հեռ. վրա:	մ^3	0.52	4.390	2.283
				3.Ընդամենը	***2265.795***
				Ընդհանուրը՝	***23871.285***

*Գինը ներառում է բոլոր ծախսերը, ներառյալ «Շահույթը» ՝ 11% և ԱԱՀ-ն՝ 20%

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ տարածքային կառավարման և
ենթակառուցվածքների նախարարություն
ՀՀ ք.Երևան, Կառավարական տուն 3,
ՀՀ կենտրոնական գանձապետարան
ՀՎՀՀ 02578338
ՀՀ 900011025815

/ստորագրություն/
Կ.Տ

Կ Ա Տ Ա Ր Ո Ղ

<< Մոնտաժտրանսսշին >> ՍՊԸ
ք. Երևան, Ուլնեցու 59/5,
տարածք 9
<<Արդշինբանկ >> «Շենգավիթ» մ/ճ
ՀՎՀՀ 02266448
Հ/Հ 24736043861500

(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված թիվ 2
« 04 » հուլիսի 2019թ. կնքված
ՏԿՏՏՆ-ԳՀԱՇՁԲ-2019/3Շ ծածկագրով պայմանագրի

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ

ՉԱՓԱԲԱԺԻՆ 1

Մ-3, Մարգարա-Վանաձոր-Տաշիր-Վրաստանի սահմանի կմ83+850 հատվածի կամրջի վերանորոգման աշխատանքների

No	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Աշխատանքների կատարման ժամկետը	
		սկիզբը	ավարտը
1	Լաբորատոր փորձարկումներ	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց 150 օր հետո
2	Նախապատրաստական աշխատանքներ	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց 140 օր հետո
3	Կամրջի վերականգնման աշխատանքներ	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց 150 օր հետո
4	Ջրահեռացման համակարգի իրականացում	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց 140 օր հետո
5	Անվտանգության էլեմենտներ	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց 120 օր հետո
6	Կամրջային պաստառի իրականացում	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց 150 օր հետո
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ		**Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո**	**Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո 150 օր հետո**

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ

ՉԱՓԱԲԱԺԻՆ 2

Մ-4, Երևան - Սևան - Իջևան - Ադրբեջանի սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ103+100 հատվածի վթարված կամրջի վերականգնման աշխատանքներ

No	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Աշխատանքների կատարման ժամկետը	
		սկիզբը	ավարտը
1	Լաբորատոր փորձարկումներ	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց 150 օր հետո
2	Նախապատրաստական աշխատանքներ	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց 140 օր հետո
3	Կամրջի վերականգնման աշխատանքներ	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց 150 օր հետո

4	Ջրահեռացման համակարգի իրականացում	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց 140 օր հետո
5	Անվտանգության էլեմենտներ	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց 120 օր հետո
6	Կամրջային պաստառի իրականացում	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց 150 օր հետո
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ		**Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո**	**Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո 150 օր հետո**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ տարածքային կառավարման և
ենթակառուցվածքների նախարարություն
ՀՀ ք.Երևան, Կառավարական տուն 3,
ՀՀ կենտրոնական գանձապետարան
ՀՎՀՀ 02578338
ՀՀ 900011025815

/ստորագրություն/
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

<< Մոնտաժտրանսսշին >> ՍՊԸ
ք. Երևան, Ուլնեցու 59/5,
տարածք 9
<<Արդշինբանկ >> «Շենգավիթ» մ/ճ
ՀՎՀՀ 02266448
Հ/Հ 24736043861500

(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 3
« 04» հուլիսի 2019թ. կնքված
ՏԿՏՏՆ-ԳՀԱՇՁԲ-2019/3Շ ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Աշխատանքի															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2019թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	45231177/15	*Մ-3 Մարգարա-Վանաձոր-Տաշիր-Վրաստանի սահմանի կմ83+850 հատվածի կամրջի վերանորոգման աշխատանքներ*	---	---	---	---	---	-----	17 700 384.0	17 700 384.0	17 700 384.0	17 700 384.0	17 700 384.0	17 700 384.0	17 700 384.0
2	45231177/16	*Մ-4, Երևան - Սևան - Իջևան - Ադրբեջանի սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ103+100 հատվածի վթարված կամրջի վերականգնման աշխատանքների*	---	---	---	---	---	-----	20 199 900.0	20 199 900.0	20 199 900.0	20 199 900.0	20 199 900.0	20 199 900.0	20 199 900.0

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*
*** հրավերում գումարները նշվում են տոկոսով, իսկ պայմանագիրը կնքելիս տոկոսի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափ*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ տարածքային կառավարման և
ենթակառուցվածքների նախարարություն
ՀՀ ք.Երևան, Կառավարական տուն 3,
ՀՀ կենտրոնական գանձապետարան
ՀՎՀՀ 02578338
ՀՀ 900011025815

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

<< Մոնտաժտրանսսշին >> ՍՊԸ
ք. Երևան, Ուլնեցու 59/5,
տարածք 9
<<Արդշինբանկ >> «Շենգավիթ» մ/ճ
ՀՎՀՀ 02266448
Հ/Հ 24736043861500

(ստորագրություն)
Կ.Տ.